ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2023թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՍԵՆ ՓՈԼԱԴՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ռեժիսոր, բեմադրիչ Արսեն Փոլադովի հիշատակը հավերժացնող հուշարձանը Երևան քաղաքի Գ. Քոչարի 21 հասցեի տարածքում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՍԵՆ ՓՈԼԱԴՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Հայաստանի եզդիների ազգային միության նախագահ Խ. Հաջոյանի և Երևանի մնջախաղի պետական թատրոնի տնօրեն Մ. Խաչատրյանի միջնորդությունը՝ ռեժիսոր, բեմադրիչ, Երևանի մնջախաղի պետական թատրոնի կայացման և հիմնադրման գործում մեծ ավանդ ունեցող Արսեն Փոլադովի հիշատակը հավերժացնելու նպատակով Երևան քաղաքի Գ. Քոչարի 21 հասցեում (Մնջախաղի պետական թատրոնի հարակից տարածքում) վերջինիս հուշարձանը տեղադրելու վերաբերյալ:

Արսեն Ռաշիտի Փոլադովը (Պոլատով) ծնվել է 1939 թվականի հունվարի 7-ին, Թալինի շրջանի Թլիկ գյուղում: Մնջախաղի թատրոնի վարպետներից էր, որը, լինելով աշխարհահռչակ Մարսել Մարսոյի սանը, հայտնի էր ոչ միայն Խորհրդային Միությունում, այլ նաև Եվրոպայում: Փոլադովի ստեղծած և բեմադրած տասնյակ մնջախաղեր և պիեսներ խաղացել են աշխարհի շատ քաղաքներում և արժանացել մեծ ընդունելության:

Փոլադովը Երևանում սկիզբ դրեց մնջախաղի թատրոնի կազմավորմանը և նրա ջանքերով թատրոնը 1983 թվականին ստացավ պետական թատրոնի կարգավիճակ:

Արսեն Փոլադովը վախճանվել է 2004 թվականի մարտի 31-ին, Յարոսլավլ քաղաքում (ՌԴ):

Կարևորելով Արսեն Փոլադովի ստեղծագործական գործունեությունն ու հայկական թատերարվեստի զարգացման գործում ունեցած նշանակալի ներդրումն արժևորելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է տալ համաձայնություն՝ Երևան քաղաքում Արսեն Փոլադովի հուշարձանի տեղադրմանը և ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՍԵՆ ՓՈԼԱԴՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արսեն Փոլադովի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՍԵՆ ՓՈԼԱԴՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արսեն Փոլադովի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ